ՏԱՐԵԳԻՐ

ICRC

ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԻՄՆԱԿԱՆ

ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ 2025

**Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) չեզոք, անկողմնակալ և անկախ կազմակերպություն է, որը մարդասիրական պաշտպանություն և աջակցություն է տրամադրում զինված ընդհարումներից և բռնության այլ իրավիճակներից տուժած անձանց: 1992 թ.-ից ի վեր ԿԽՄԿ-ն մարդասիրական գործունեություն է ծավալում տարածաշրջանում՝ աջակցելով հակամարտությունից տուժած անձանց, նպաստելով միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) տարածմանն ու կիրարկմանը և հանդես գալով որպես չեզոք միջնորդ հակամարտության կողմերի միջև:**

Երևանում ԿԽՄԿ պատվիրակության և Գորիսում ենթապատվիրակության միջոցով շարունակական աջակցություն ենք ցուցաբերել Ղարաբաղյան հակամարտության 2020-2023 թթ.-ի սրացումների հետևանքով տուժած անձանց՝ իրագործելով Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանամերձ համայնքների դիմակայության ամրապնդման ծրագրեր:

Շարունակել ենք աջակցել 2020-2023 թթ.-ի հակամարտության սրացումների հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքներին՝ «Սատարում» ծրագրի շրջանակներում կազմակերպելով թեմատիկ հանդիպումներ, հիշատակի միջոցառումներ, անհատական այցելություններ և անհրաժեշտ ուղղորդումներ: Ընտանիքների՝ գործող բոլոր խմբերի միջև ավելի արդյունավետ համակարգման և համախմբման պահանջներին արձագանքելով՝ աջակցել ենք հատուկ հաղորդակցման հարթակի ստեղծմանը, որը միավորում է ամենաակտիվ առաջնորդներին, ինչպես նաև փոքր հասարակական կազմակերպությունների և միավորումների ղեկավարներին:

Բացի այդ, Հայաստանի պատկան մարմիններին տրամադրել ենք տեխնիկական և նյութական, այդ թվում՝ դատաբժշկական փորձագիտական աջակցություն՝ նպաստելու աճյունների հետ արժանապատիվ վարվեցողությանը և հակամարտության կամ արտակարգ այլ իրավիճակների հետևանքով անհայտ կորած անձանց ճակատագրերի պարզմանը: Աշխատել ենք նաև սահմանամերձ համայնքներում անհետաձգելի բուժօնության հասանելիությունն ամրապնդելու ուղղությամբ՝ խթանելով բուժանձնակազմի գիտելիքների ու առողջապահական կենտրոնների նյութական կարողությունների զարգացումը:

Շարունակել ենք այցելել հակամարտության առնչությամբ Ադրբեջանում պահվող հայ անձանց, որոնց պահման փաստը հաստատվել է համապատասխան իշխանությունների կողմից: Այցելությունների ընթացքում մշտադիտարկել ենք նրանց հանդեպ վերաբերմունքը և ազատազրկման պայմանները, նպաստել ընտանիքների հետ կապի հաստատմանը: Իշխանությունների համաձայնությամբ՝ ազատազրկված անձանց կապը ընտանիքների հետ պահպանվել է Կարմիր խաչի նամակների, հեռախոսազանգերի, բանավոր և տեսաձայնագրված հաղորդագրությունների միջոցով:

## Անհայտ կորած և ազատազրկված անձինք, աճյունների հետ վարվեցողություն

Շուրջ **445 զանգ** և **այց** ենք ունեցել Երևանի և Գորիսի գրասենյակներում՝ հակամարտության սրացումների արդյունքում ընտանիքների բաժանման առնչությամբ:

**426 անձ** դեռևս անհայտ կորած է համարվում հակամարտության 2020-2023 թթ. սրացումների հետևանքով՝ ընտանիքների կողմից ստացված դիմումների համաձայն: ԿԽՄԿ-ն շարունակում է աշխատել համապատասխան կառույցների հետ՝ որոնման և նույնականացման գործընթացը դյուրացնելու և ընտանիքներին հուզող հարցերին պատասխաններ տալու ուղղությամբ:

**140 բանավոր, տեսաձայնային և գրավոր Կարմիր խաչի հաղորդագրություններ** են փոխանցվել հակամարտության սրացումների առնչությամբ ազատազրկվածների և նրանց ընտանիքների միջև: Ավելին, ԿԽՄԿ-ն կանոնավոր կերպով այցելում է զինված հակամարտության առնչությամբ պահվող անձանց՝ դիտարկելով ազատազրկման պայմանները և նրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև նպաստելով հարազատների հետ նրանց կապի պահպանմանը:

**14 տեղեկատվական հանդիպում** է անցկացվել է անհայտ կորածների ընտանիքների համար «Սատարում» ծրագրի շրջանակում Արարատի և Գեղարքունիքի մարզերում:

**5 նախապատրաստական հանդիպում** է կազմակերպվել իրազեկման/հիշատակի միջոցառումների կապակցությամբ Արարատի, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի ընտանիքների համար:

**2 սոցիալական/մշակութային և մեկ հիշատակի/իրազեկման միջոցառում** է կազմակերպվել անհայտ կորածների ընտանիքների համար Արարատի, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում:

**20 անդամ** անհայտ կորածների ընտանիքներից մասնակցել է ընտանիքների և իշխանությունների միջև կառուցողական հաղորդակցության վերաբերյալ քառօրյա աշխատաժողովի:

**3 ԴՆԹ փորձագետ** Դատաբժշկական գիտագործնական կենտրոնի (ԴԲԳԿ) ԴՆԹ լաբորատորիայից Թբիլիսիում մասնակցել է դեպի Վրաստանի Ազգային դատաբժշկական բյուրոյի (ISO/IEC 17025:2017 հավատարմագրված) ԴՆԹ լաբորատորիա ուսումնական այցին՝ հավատարմագրված լաբորատորիայի գործելակերպերին տեղում ծանոթանալու նպատակով:

**3 գենետիկ փորձագետ** ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից մասնակցել է Թբիլիսիի ԿԽՄԿ գենետիկայի կենտրոնի դասընթացին, որն առնչվում էր խնդրահարույց հետմահու նմուշների ԴՆԹ պրոֆիլների գենետիկական վերլուծությանն ու մեկնաբանությանը:

**100 դիապարկ**, երեք դիահերձման փաթեթ, հինգ դիահերձման սղոց և 100 սղոցի սայր է նվիրաբերվել ԴԲԳԿ լաբորատորիային:

**1 Dremel գործիք և աքսեսուարներ** են նվիրաբերվել ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիային՝ ԴՆԹ հետազոտությունների համար ոսկորների նմուշները նախապատրաստելու նպատակով:

**3-րդ պրակտիկ սեմինարը** դատաբժշկական պաթոլոգիայի թեմայով կազմակերպվել էր ԴԲԳԿ փորձագետների համար՝ մահվան դեպքերի վայրի զննման, դիահերձման ընթացակարգերի և պատասխանատվության շղթայի կազմակերպման գործում կառուցվածքային և ստանդարտացված մոտեցում կիրառելու նպատակով:

**11 մասնակից** ԴԲԳԿ-ից և Հայաստանի քննչական կոմիտեից մասնակցել է վարժանքի՝ ուղղված ավելի մեծ թվով ԴՆԹ համընկնումներ ապահովելու նպատակով առկա ռազմավարության վերանայմանը, հակամարտության 2020 թ.-ի սրացման հետևանքով անհայտ կորած անձանց ԴՆԹ նմուշների և պրոֆիլների վերագնահատմանը, ինչպես նաև նույնականացման հետ կապված խոչընդոտների բացահայտելուն և դրանց լուծումների առաջարկելուն:

Անհայտ կորած անձանց ընտանիքների նախաձեռնությամբ և ԿԽՄԿ աջակցությամբ Երևանում բեմադրված ներկայացում:

## Հոգեկան առողջություն և հոգեսոցիալական աջակցություն (ՀԱՀՍԱ)

**2,936 անձ** օգտվել է հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության (ՀԱՀՍԱ) ծրագրերից:

**2,110 անձ,** ներառյալ՝ Ղարաբաղից Հայաստան տեղափոխվածները և սահմանամերձ համայնքներում բնակվողները, մասնակցել են քաղաքացիական բնակչության տարբեր շերտերի վրա զինված ընդհարումների թողած հոգեբանական հետևանքների վերաբերյալ խմբակային հանդիպումների՝ կազմակերպված ԿԽՄԿ-ի և Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կողմից:

**81 անդամ** անհայտ կորածների ընտանիքներից հոգեբանական աջակցություն է ստացել տնայցերի կամ աջակցության խմբերի միջոցով:

**66 խմբային և անհատական** ՀԱՀՍԱ հանդիպում է կազմակերպվել Հայաստանի տարբեր մարզերում անհայտ կորածների ընտանիքների **38 անդամի** համար:

**21 անձ,** որոնք նախկինում պահվում էին անազատության մեջ հակամարտության առնչությամբ, մասնակցել են **34 անհատական և խմբային** ՀԱՀՍԱ հանդիպումների:

**18 բուժաշխատող** Գորիսի հիվանդանոցից, որոնք ավարտել էին «Օգնիր օգնողին» դասընթացը, մասնակցել են սուպերվիզիայի և աջակցության չորս հանդիպումների:

**20 բուժաշխատող** տեղական ՀԿ-ներից, իշխանություններից և ՀԿԽԸ-ից, մասնակցել է Շվեդական Կարմիր խաչի հետ համատեղ կազմակերպված հինգօրյա վերապատրաստման դասընթացի տեղական առողջապահության ոլորտի մասնագետների ու այն գերատեսչությունների համար, որոնք աշխատում են հակամարտությունների առնչությամբ նախկինում ազատազրկված անձանց հետ:

## Առողջապահություն

**59 բուժաշխատող**, այդ թվում 22 բժիշկ և առողջապահության ոլորտի մասնագետ հինգ հիվանդանոցներից և 37 բուժքույր (ներառյալ 31 համայնքային բուժքույր) վերապատրաստվել է ԿԽՄԿ-ԱՀԿ «Անհետաձգելի բուժօգնության հիմունքներ» թեմայով համատեղ դասընթացի շրջանակում:

**Առողջապահության նախարարության (ԱՆ) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի** անձնակազմը մասնակցել է «Զանգվածային տուժածներով պատահարների կառավարում» դասընթացին:

**3 բժշկական կրթական հաստատությունների նվիրաբերվել են վերապատրաստման սարքավորումներ,** այն է՝ Երևանի պետական բժշկական համալսարանի քոլեջին, Երևանի հենակետային բժշկական քոլեջին, և Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոնին:

**ԱՆ «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի Գորիսի բաժանմունքն** աջակցություն է ստացել տեղափոխման և առաջնահերթ կահույքով ու սարքավորումներով համալրման հարցում:

**2 բուժակ-մանկաբարձական կետերը,** որոնք կառուցվել էին մեր կողմից 2024 թ.-ին Շատվան (Վարդենիս համայնք, Գեղարքունիքի մարզ) և Արավուս (Տեղ համայնք, Սյունիքի մարզ) գյուղերում, կահավորվել են և տեխնիկապես վերազինվել և պատրաստ են ծառայություններ մատուցել ժամանակակից պայմաններում:

**Կապանի բժշկական կենտրոնն** աջակցություն է ստացել կենտրոնական վակուումային համակարգի վերանորոգման համար:

## Բնակավայրերի ջրամատակարարում

5 **արևային ֆոտովոլտային համակարգ** է տեղադրվել Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի երկու բժշկական կենտրոնում, մեկ առողջապահական կենտրոնում ու երկու առողջության առաջնային պահպանման կենտրոնում:

## Զինամթերքով աղտոտված տարածքների անվտանգություն

**284 բնակիչ** Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի սահմանամերձ 16 համայնքներից մասնակցել է Զինամթերքով աղտոտվածության (ԶԱ) ռիսկերի գնահատմանը, որի նպատակն էր պարզել առկա կարիքներն ու բացերը, ինչպես նաև ներկայացնել դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ:

Երեխաների ներգրավում Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղում ԶԱ ռիսկերին առնչվող ոչ պաշտոնական քննարկման մեջ

## Միջազգային մարդասիրական իրավունքի խթանում

**30 զինծառայող ՀՀ զինված ուժերից,** որոնք պատրաստվում են մեկնել ծառայության Կոսովոյում ՆԱՏՕ-ի առաքելության կազմում, ծանոթացել են Մարդու իրավունքի և Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) հիմունքներին ՀՀ պաշտպանության նախարարության խաղաղապահ բրիգադի ուսումնական կենտրոնում:

**13 զինծառայող** Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերից իրազեկվել է ԿԽՄԿ հանձնագրի, գործունեության, Մարդու իրավունքի և ՄՄԻ հիմունքների վերաբերյալ Շիրակի մարզում կազմակերպված դասընթացների շրջանակներում:

## Տնտեսական աջակցություն

**496 տնային տնտեսություն** Գեղարքունիքի մարզի վեց և Սյունիքի մարզի ութ համայնքներից ստացել է հիգիենայի պարագաներ:

**19 տնային տնտեսություն**, այդ թվում՝ անհայտ կորածների, պահվող անձանց և նախկինում պահվող անձանց խոցելի ընտանիքները, եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով ստացել է աջակցություն՝ փոքր դրամաշնորհների տեսքով:

**103 տնային տնտեսություն (450 անհատ)** օգտվել է հողերի բարելավման ծրագրից Վայոց Ձորի Խաչիկ գյուղում, որի արդյունքում բարելավվել է **100 հա հողատարածք:**

**18,5 տոննա հաճարի և 65 տոննա դեղին ոլոռի սերմացու** է տրամադրվել Խաչիկ գյուղի շահառուներին՝ բարելավված հողերի վրա ցանելու նպատակով:

**4 առավել խոցելի տնային տնտեսություն** ստացել է բազմանպատակ դրամաշնորհ՝ հրատապ կարիքները հոգալու համար:

**20 ՀԿԽԸ կամավոր** Վայոց Ձորի մարզից անցել է տնտեսական անվտանգության հիմունքների վերաբերյալ վերապատրաստում՝ տնտեսական անվտանգության վերաբերյալ գիտելիքների ու կարողությունների զարգացման նպատակով:

**Ղարաբաղից Հայաստան տեղափոխված 50 տնային տնտեսություն** օգտվել է «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի հետ համատեղ իրականացվող ծրագրից՝ ստանալով **200 փեթակ** մեղվաընտանիքներով, գործիքների և պաշտպանիչ հագուստի **50 հավաքածու**, ինչպես նաև մասնակցելով 12 սահմանամերձ համայնքներում իրականացված մեղվաբուծության դասընթացների:

Ղարաբաղից Հայաստան տեղափոխված 50 տնային տնտեսություն ստացել է 200 փեթակ մեղվաընտանիքներով:

Մենք աջակցում ենք զինված հակամարտությունից և բռնության այլ իրավիճակներից տուժած մարդկանց ամբողջ աշխարհում՝ անելով հնարավորինը նրանց կյանքն ու արժանապատվությունը պաշտպանելու և տառապանքը մեղմելու համար, հաճախ՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի մեր գործընկերների հետ համագործակցությամբ: Մենք նաև ձգտում ենք պաշտպանել մարդկանց զրկանքներից՝ մարդասիրական իրավունքը խթանելու և ամրապնդելու, ինչպես նաև համամարդկային մարդասիրական սկզբունքները պահպանելու միջոցով:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակություն
Հայաստանում
73/3 Նաիրի Զարյան փ.
0014 Երևան, Հայաստան
Հեռ.՝ +374 297415, erevan@icrc.org
Գլխավոր նկարը՝ Քնարիկ Սերոբյան/ԿԽՄԿ
© ԿԽՄԿ, սեպտեմբեր 2025 թ.

facebook.com/icrcAm
twitter.com/icrcAm
instagram.com/icrc

ICRC

2025.2245/002